ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 23/01-Թ

10.01.2023թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Սպարապետ Վազգեն Սարգսյանի ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Շողիկ Ալեքսանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2023թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է 12545,8 հազ. դրամ «2023 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1075 ծրագրի «Մշակութային ժառանգության ծրագիր» 11004 «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» հատկացումներն օգտագործել «Սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն թանգարան ՊՈԱԿի 2023թ հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

2. Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

3.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

3.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ	ՆՎԻՐԱՌՈՒ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	Սպարապետ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60	ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
Ֆին. նախ. Գործառ. Վարչ.	Հ/Հ 900428000443
900411068027	ՀՎՀՀ 04213428
	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Շ. Ալեքսանյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.